

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 38/6

29 սեպտեմբերի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Դանիել Պապյանի 07.09.2015 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 24.10.2014 թ-ի թիվ 6104262 ակտի դեմ:

Ա/Ձ Դանիել Պապյանի գանգատում բերված փաստարկները.

Համաձայն Արաբկիրի հարկային տեսչության 07.10.2014թ. թիվ 6104262 հանձնարարագրի իբրև իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որի արդյունքում 17.10.2014թ. կազմվել է թիվ 6104262 ստուգման ակտի նախագիծը:

Ըստ թիվ 6104262 ստուգման ակտի նախագծի ինձ պատկանող հանրային սննդի կետում 13.10.2014թ. ժամը 15-20-ին ծառայության համար կատարվել է 4000 դրամի կանխավճարի վճարում, որի դիմաց համապատասխան ՀԴՄ կտրոն չի տրամադրվել:

Ա/Ձ Դանիել Պապյանը հայտնում է, որ ակտի նախագծում նշվածը չի համապատասխանում իրականությանը, իրականում որևէ ծառայություն չի մատուցվել և 4000 դրամի կանխավճարի վճարում չի կատարվել:

Ակտի նախագիծը Ա/Ձ Դանիել Պապյանի կողմից ստորագրությամբ ստացվել է 17.10.2014թ.: Որից հետո ակնկալել է ստանալ ստուգման ակտը, այն բողոքարկելու համար, սակայն վերջինիս կազմման մասին տեղեկացել է միայն ամիսներ անց: Այսպես, 28.08.2015թ.-ին Ա/Ձ Դանիել Պապյանը Արաբկիրի հարկային տեսչությունից ստացել է 13.08.2015թ. թիվ 00002861 ծանուցագիրը, որով հայտնվել է 300.000 դրամի պարտավորության առկայության վերաբերյալ:

Տվյալ դեպքում խախտվել է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջները:

Հաշվի առնելով վերը նշված փաստերը և այն, որ մինչ օրս չի ստացվել ստուգման ակտի օրինակը, Ա/Ձ Դանիել Պապյանը խնդրում է սույն գանգատն ընդունել վարույթ և անվավեր ճանաչել վերը նշված ակտի նախագծի հիման վրա կազմված ակտը: Ա/Ձ Դանիել Պապյանը հայտնում է նաև, որ նիստի օր նշանակվելու և իրեն մասնակցելու հնարավորություն ընձեռնվելու դեպքում կներկայացվեն լրացուցիչ այլ ապացույցներ:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 07.10.2014 թ-ի թիվ 6104262 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Դանիել Պապյանի մոտ իրականացվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի

(հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) և հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգումներ: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 24.10.2014 թ-ի թիվ 6104262 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ 17.10.2014 թ-ին կազմվել է ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ թիվ 6104262 ակտի նախագիծը, որը նույն օրը հանձնվել է Ա/Ձ Դանիել Պապյանին: Այնուհետև 24.10.2014 թ-ին կազմվել է ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ թիվ 6104262 ակտը, որը, սակայն, սահմանված կարգով չի ներկայացվել Ա/Ձ Դանիել Պապյանին: Նշված ակտի մասին Ա/Ձ Դանիել Պապյանը տեղեկացել է ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 13.08.2015 թ-ի ծանուցագրի միջոցով: Մասնավորապես, նշված ծանուցագրով Ա/Ձ Դանիել Պապյանին տեղեկացվել է, որ 13.08.2015 թ-ի դրությամբ նրա չկատարված պարտավորությունները կազմում են 300.000 դրամ, որն Ակտով առաջադրված տուգանքի կրկնապատկված գումարն է:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 24.10.2014 թ-ի թիվ 6104262 ակտի դեմ վարչական կարգով գանգատ ներկայացվելու ժամկետի սկիզբը սկսվել է այն պահից, երբ Ա/Ձ Դանիել Պապյանին, ըստ էության, տեղեկացվել է ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 24.10.2014 թ-ի թիվ 6104262 ակտի մասին: Այսինքն, Ակտի դեմ գանգատ ներկայացնելու ժամկետի սկիզբը անհրաժեշտ է համարել 13.08.2015 թ-ը:

Ակտի 2-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ հարկային տեսուչ Արմեն Միերյանի կողմից 13.10.2014 թ-ին ժամը 15:20-ին Ա/Ձ Դանիել Պապյանին պատկանող ք.Երևան, Փափազյան-Քոչար խաչմերուկ հասցեում գտնվող հանրային սննդի կետում կատարվել է վճարում 4000 դրամի չափով՝ կանխավճար ծառայության համար, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով: Ա/Ձ-ի կողմից գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Ստուգում իրականացնող հարկային ծառայողները ներկայացրել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 15:29-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել «Z» հաշվետվություն 0 դրամ ընդհանուր գումարով, որում կատարված վճարման արժեքը ներառված չի եղել: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 4000 դրամը, ժամը 15:29-ին մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 15:29-ին նորից դուրս է բերվել «Z» հաշվետվություն՝ 4000 դրամ ընդհանուր գումարով: Ստուգմամբ պարզվել է, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել է ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի գ) ենթակետի պահանջները: Նշված խախտման համար Ակտով կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

Տվյալ դեպքում հարկ է նշել, որ ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 07.10.2014 թ-ի թիվ 6104262 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Դանիել Պապյանի մոտ պետք է իրականացվեր հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Սակայն սույն գործում առկա ապացույցների ուսումնասիրությամբ Հանձնաժողովն արձանագրեց, որ ստուգումն իրականացնող անձանց կողմից իրականացվել են այնպիսի գործողություններ, որոնք դուրս են նշված հանձնարարագրի շրջանակներից:

Այսպես, 13.10.2014 թ-ին ստուգումն իրականացնող անձանց կողմից կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ արձանագրություն, որում մասնավորապես նշված է, որ հարկային տեսուչ Արմեն Մեբրյանի կողմից 13.10.2014 թ-ին ժամը 15:20-ին Ա/Ձ Դանիել Պապյանին պատկանող ք.Երևան, Փափազյան-Քոչար խաչմերում հասցեում գտնվող հանրային սննդի կետում կատարվեց հսկիչ գնում 4000 դրամի չափով՝ կանխավճար ծառայության համար, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով:

Հարկ է նշել, որ հարկային մարմնի կողմից հսկիչ գնումների անցկացման կարգը (այսուհետ նաև՝ Կարգ) սահմանված է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի Հավելված 2-ով:

Կարգի 1.4 կետի համաձայն. «Հսկիչ գնումն իրականացվում է հարկային մարմնի ղեկավարի կամ հարկային տեսչության պետի կողմից տրված գրավոր հանձնարարագրի հիման վրա, որտեղ նշվում են հսկիչ գնում կատարելու հիմքերը, նպատակը, տնտեսվարող սուբյեկտի տվյալները (անվանումը, գտնվելու վայրը), հսկիչ գնում իրականացնելու վայրը, ժամկետները և հսկիչ գնում իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձի (անձանց) տվյալները (անունը, ազգանունը, պաշտոնը)՝ վավերացված հսկիչ գնում իրականացնող հարկային մարմնի կնիքով»:

Քննարկվող դեպքում, ինչպես որ վերը նշվել է, ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի կողմից 07.10.2014 թ-ին հրապարակվել է թիվ 6104262 հանձնարարագիրը Ա/Ձ Դանիել Պապյանի մոտ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում կատարելու, այլ ոչ թե հսկիչ գնում կատարելու վերաբերյալ: Ընդ որում հարկ է նշել, որ հսկիչ գնումը ուսումնասիրության տեսակ է, որի արդյունքում Կարգի 1.6 կետի համաձայն կազմվում է արձանագրություն:

Հարկ է նշել նաև, որ վերը նշված հանձնարարագրում նշված պաշտոնատար անձանց կողմից կատարվել է փաստացի չգնված ապրանքի (ընդամենը վճարվել է կանխավճար) հետ վերադարձ և այդ մասին 13.10.2014 թ-ին կազմվել է «Հսկիչ գնումների արդյունքում վաճառված ապրանքների հետընդունման» թիվ 6104262 ակտը: Այսինքն, իրականացվել են համապատասխան գործառույթներ, որոնք նախատեսված են իրականացնել բացառապես Կարգով նախատեսված հսկիչ գնումների ընթացքում:

Քննարկվող դեպքում, ըստ գործում առկա ապացույցների, ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 07.10.2014 թ-ի թիվ 6104262 հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում կատարելու վերաբերյալ հանձնարարագրում ընդգրկված պաշտոնատար անձանց կողմից, ըստ էության, կատարվել է հսկիչ գնում, որի արդյունքում կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ արձանագրություն, այնուհետև հետ են վերադարձվել այդպես էլ չգնված ապրանքները: Սակայն պետք է փաստել, որ հսկիչ գնումն իրականացրած անձինք չեն ունեցել հսկիչ գնում իրականացնելու լիազորություններ, այն է՝ հսկիչ գնումն իրականացվել է առանց հսկիչ գնում կատարելու վերաբերյալ հանձնարարագրի առկայության:

Վերոգրյալ փաստական հանգամանքներից հետևում է, որ խախտվել են «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի Հավելված 2-ով նախատեսված հարկային մարմնի կողմից հսկիչ գնումների անցկացման կարգի պահանջները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի, անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ ընկերության գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Ձ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 24.10.2014 թ.ի թիվ 6104262 ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ